ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ

1. Պայմանագրի կնքումը Կողմերը դիտարկում են որպես Հաճախորդի կողմից այլ անձին տրված անձնական տվյալների մշակման հանձնարարական, որը նախատեսված է Հայաստանի Հանրապետության 2015 թվականի հուլիսի 1-ի «Անձնական տվյալների պաշտպանության մասին» թիվ ՀՕ-49-Ն Օրենքի 14-րդ հոդվածով:
2. Սույն հանձնարարականով անձնական տվյալների մշակման նպատակը Պայմանագրի պայմանների կատարումն է:
3. Հաճախորդը հանձնարարում է Օ-ԷՍ-ՋԻ-ին մշակել անձնական տվյալներ, այն է՝ գործողություններ (գործողությունների ամբողջություն), որոնք կապված են անձնական տվյալների հավաքագրման, գրանցման, մուտքագրման, համակարգման, ձևավորման, պահպանման, օգտագործման, փոխակերպման, վերականգնման, փոխանցման, ուղղման, արգելափակման, ոչնչացման հետ կամ դրանցով այլ գործողությունների իրականացման՝ անկախ իրականացման տեսակից և եղանակից (ներառյալ՝ ցանկացած ավտոմատացման գործիքների, տեխնիկական միջոցների օգտագործմամբ կամ առանց դրանց):
4. ֆիզիկական անձանց մշակվող անձնական տվյալների բովանդակությունը և ցանկը՝ ազգանունը, անունը, հայրանունը. տաբելային համարը. ՀՎՆՀ. սեռ. աշխատանքի տեսակը (հիմնական, համատեղությամբ). ծննդյան ամսաթիվը. ծննդավայրը. քաղաքացիությունը. օտար լեզվի իմացությունը. կրթության մասին տեղեկությունները (տեսակը, ուսումնական հաստատության անվանումը, ուսումնական հաստատությունն ավարտելու տարին, որակավորումը՝ ըստ կրթության վերաբերյալ փաստաթղթի, կրթության, որակավորման կամ հատուկ գիտելիքների առկայության մասին փաստաթղթի անվանումը, սերիան և համարը, ուղղվածությունը, մասնագիտությունն ըստ կրթության մասին փաստաթղթի). տեղեկատվությունը աշխատանքային ստաժի մասին (ընդհանուր. շարունակական. Երկարամյա ծառայության համար հավելավճարի հնարավորությամբ). ամուսնական կարգավիճակը. ընտանիքի կազմը. անձնագրային տվյալները (սերիան, համարը, տրման ամսաթիվը, ում կողմից է տրված). բնակության հասցեն. գրանցման հասցեն. հեռախոսահամարը. զինվորական հաշվառման մասին տեղեկությունները (պահեստային կատեգորիա. զինվորական կոչում. ուղղվածությունը. զինվորական հաշվառման մասնագիտությունը; զինվորական ծառայության համար պիտանիության կատեգորիան). տեղեկատվություն աշխատանքի ընդունվելու և այլ աշխատանքի տեղափոխվելու մասին. կառուցվածքային ստորաբաժանումը. պաշտոնը. մասնագիտությունը. ատեստավորումը. սակագնային դրույքաչափը (աշխատավարձ). հավելավճարները. որակավորման կարգը, դասը (կատեգորիան). որակավորման բարձրացում (ուսուցման մեկնարկի ամսաթիվը. ուսուցման ավարտի ամսաթիվը. որակավորման բարձրացման տեսակը. կրթական հաստատության անվանումը. փաստաթղթի տվյալները (անվանումը, սերիան, համարը, ամսաթիվը); մասնագիտական վերապատրաստումը (վերապատրաստման մեկնարկի ամսաթիվը. վերապատրաստման ավարտի ամսաթիվը. մասնագիտությունը; փաստաթղթի տվյալները (անվանումը, սերիան, համարը. ամսաթիվը). մրցանակները և խրախուսումները; պատվավոր կոչումների անվանումները. փաստաթղթի տվյալները (անվանումը, սերիան, համարը, ամսաթիվը); արձակուրդը (արձակուրդի տեսակը. աշխատանքի ժամանակահատվածը. արձակուրդի օրացուցային օրերի քանակը. սկզբի և ավարտի ամսաթիվը). սոցիալական արտոնությունները (արտոնության անվանումը, համարը և փաստաթղթի տրման ամսաթիվը). աշխատանքային պայմանագրի դադարեցման հիմքերը (ազատում). աշխատանքից ազատման ամսաթիվը. աշխատանքային պայմանագրի համարը և ամսաթիվը. տեղեկատվությունը գործուղումների մասին (ամսաթիվը, նշանակման վայրը, ժամկետը, նպատակը, ֆինանսավորման աղբյուրը, առաջադրանքը). աշխատանքային ժամերի մասին տեղեկությունները (աշխատանքի հաճախումը և բացակայությունը). բարեկամական կապը. էլեկտրոնային փոստը. ընտանեկան կարգավիճակը. տրանսպորտային միջոցի մասին տեղեկությունները. բանկային հաշվի վերաբերյալ տեղեկությունները. Ֆինանսական տեղեկատվությունը. եկամուտների մասին տեղեկատվությունը. պաշտոնը. աշխատանքի վայրը. կառուցվածքային ստորաբաժանումը. տեղեկությունները հաշմանդամության մասին:
Հաճախորդը պարտավոր է գրավոր տեղեկացնել Օ-ԷՍ-ՋԻ-ին, եթե անձնական տվյալների մշակմանը մասնակցող անձնական տվյալները/սուբյեկտները տարբերվում են սույն կետում նշվածներից:
5. Անձնական տվյալների մշակման ոլորտում կողմերի պարտավորությունները:
5.1. Հաճախորդի պարտավորությունները.
5.1.1. Հաճախորդը պարտավորվում է պահպանել Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ նախատեսված՝ անձնական տվյալների սուբյեկտների իրավունքներն ու օրինական շահերը, այդ թվում՝ ստանալ անձնական տվյալների սուբյեկտների համաձայնությունը կամ ունենալ անձնական տվյալների մշակման և անձնական տվյալների անդրսահմանային փոխանցման համար Հայաստանի Հանրապետության 2015 թվականի հուլիսի 1-ի «Անձնական տվյալների պաշտպանության մասին» թիվ ՀՕ-49-Ն Օրենքով նախատեսված այլ հիմքերը, և պարտավորվում է ներկայացնել այդպիսի հիմքերի առկայության հաստատումը Օ-ԷՍ-ՋԻ-ի դրանք ստանալու օրվանից երեք օրվա ընթացքում, ինչպես նաև կատարել Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության այլ պահանջները՝ Օ-ԷՍ-ՋԻ-ի ծառայություններից օգտվելու համար:
5.1.2. Եթե անձնական տվյալների սուբյեկտը պահանջում է տրամադրել տեղեկատվության անձնական տվյալների մշակման, անձնական տվյալների ուղղման վերաբերյալ, վիճարկում է անձնական տվյալների մշակման օրինականությունը կամ պահանջում է անձնական տվյալների ջնջում կամ ոչնչացում, Հաճախորդը պարտավորվում է անհապաղ ցուցումներ տալ Օ-ԷՍ-ՋԻ-ին՝ համապատասխան գործողություններ և (կամ) ծառայություններ կատարելու համար՝ Պայմանագրով նախատեսված կարգով և պայմաններով.
5.1.3. Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ և (կամ) սույն հավելվածով նախատեսված իր պարտավորությունների խախտման դեպքում Հաճախորդը պարտավորվում է ողջ ծավալով փոխհատուցել Օ-ԷՍ-ՋԻ-ին՝ վերը նշված պարտավորությունները չկատարելու հետևանքով պատճառված փաստաթղթորեն հաստատված վնասը:
5.2. Օ-ԷՍ-ՋԻ- ի պարտավորությունները.
5.2.1. Անձնական տվյալների մասով Օ-ԷՍ-ՋԻ-ին գործում է հետևելով Հաճախորդի համապատասխան հրահանգներին՝ Պայմանագրով նախատեսված կարգով և պայմաններով: Օ-ԷՍ-ՋԻ-ին մշակում է անձնական տվյալները միայն այն ծավալով և այն ժամանակահատվածում, որն անհրաժեշտ է ծառայությունների մատուցման համար.
5.2.2. Օ-ԷՍ-ՋԻ-ին պարտավորվում է պահպանել սույն հանձնարարականով մշակվող անձնական տվյալների գաղտնիությունը և ապահովել այդ անձնական տվյալների անվտանգությունը դրանց մշակման ընթացքում:
5.2.3. Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության պահանջներին համապատասխան, Օ-ԷՍ-ՋԻ-ին ձեռնարկում է անհրաժեշտ կազմակերպչական և տեխնիկական միջոցները սույն հանձնարարականի շրջանակներում օգտագործվող անձնական տվյալները չարտոնված կամ պատահական մուտքից, ոչնչացումից, փոփոխումից, արգելափակումից, պատճենումից, տարածումից, ինչպես նաև անձնական տվյալների հետ կապված այլ անօրինական գործողություններից պաշտպանելու համար:
5.3. Հաճախորդը թույլ է տալիս Օ-ԷՍ-ՋԻ-ին մատուցել Ծառայություններ ենթակատարողների ներգրավմամբ և իրականացնել անդրսահմանային փոխանցում երրորդ անձանց, այն օտարերկրյա պետությունների տարածքներ, որոնք ապահովում են անձնական տվյալների սուբյեկտների (բայց ոչ տեղեկատվության ֆիզիկական կրիչների) իրավունքների ադեկվատ պաշտպանություն Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս՝ պայմանով, որ այդպիսի փոխանցումը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության պահանջներին:
5.4. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված անձնական տվյալների սուբյեկտի իրավունքների պահպանման համար Կողմերը պայմանավորվել են հաստատել Օ-ԷՍ-ի կողմից անձնական տվյալների մշակման հայտը ստանալուց հետո փոխգործակցության հետևյալ ընթացակարգը՝ այն ստանալու պահից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում Օ-ԷՍ-ին պարտավորվում է ծանուցել Հաճախորդին նման հարցում ստանալու մասին:
5.5. Սույն պայմանագրի գործողության դադարեցման դեպքում Օ-ԷՍ-ՋԻ-ին պարտավորվում է 30 (երեսուն) օրվա ընթացքում ոչնչացնել Հաճախորդի կողմից մշակման հանձնված անձնական տվյալները:
5.6. Հաճախորդի կողմից որոշակի անձնական տվյալների ջնջման հարցում ուղարկելու դեպքում Օ-ԷՍ-ՋԻ-ին պարտավորվում է ջնջել այդ անձնական տվյալները 30 (երեսուն) օրվա ընթացքում:
6. Աուդիտներ
6.1. Նախապես համաձայնեցնելով Օ-ԷՍ-ՋԻ-ի հետ այցելության ամսաթիվը և ժամը, Հաճախորդն իրավունք ունի իրականացնել Օ-ԷՍ-ՋԻ-ի կողմից Պայմանագրի պայմանների պահպանման մոնիթորինգ, որոնք վերաբերում են անվտանգության տեխնիկական և վարչական միջոցառումներին և ուղղված են անձնական տվյալների մշակման ընթացքում խախտումներից խուսափելուն: Օ-ԷՍ-ՋԻ-ի տարածքում գտնվելիս Հաճախորդը համաձայնում է պահպանել Պաշտպանությանը և անվտանգությանը վերաբերող Օ-ԷՍ-ՋԻ-ի քաղաքականությունների և ընթացակարգերի պահանջները: Հսկողությանը վերաբերող Հաճախորդի իրավունքների վրա տարածվում են հետևյալ սահմանափակումները.
- Հաճախորդին չպետք է հասանելի լինեն Օ-ԷՍ-ՋԻ-ի այլ հաճախորդներին պատկանող նյութերին և տեղեկատվությանը.
- Օ-ԷՍ-ՋԻ-ին չի բացահայտում իր ներքին ընթացակարգերին կամ անվտանգության ապահովման միջավայրին վերաբերող տեղեկատվությունը.
- Հաճախորդը կարող է գտնվել Օ-ԷՍ-ՋԻ-ի տարածքում միայն այն դեպքում, եթե Հաճախորդի լիազորված ներկայացուցչին մշտապես ուղեկցում է Օ-ԷՍ-ՋԻ-ի ներկայացուցիչը սահմանափակ մուտքի տարածքում.
- Հաճախորդը կարող է մուտք ունենալ Արխիվ (բայց ոչ պահվող Տեղեկատվության կրիչներին)՝ ընդհանուր ստուգման համար: Օ-ԷՍ-ՋԻ-ի տարածքում Պատվիրատուի հասանելիությունը իր Տեղեկատվության կրիչներին կարող է իրականացվել Աուդիտ սենյակում (առկայության դեպքում).
- Օ-ԷՍ-ՋԻ-ին իրեն իրավունք է վերապահում մերժել ցանկացած մրցակցի կամ մրցակցի անունից գործող որևէ երրորդ կողմի մուտքը:
6.2. Հաճախորդի անունից գործող երրորդ անձանց մուտքը Արխիվ հասանելի կլինի միայն գաղտնիության մասին համաձայնագիր կնքելուց հետո:
6.3. Այն դեպքերում, երբ հսկողության իրականացման համար Օ-ԷՍ-ՋԻ-ից պահանջվում է որոշակի ծառայություններ մատուցում, Հաճախորդը պարտավոր է վճարել այդպիսի ծառայությունների արժեքը:

***